



N \_\_\_\_\_

«11» հոկտեմբերի 2011 թ.

**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ընդհանուր ժողովի թիվ 03 արձանագրությունից:  
07 հոկտեմբերի 2011 թ.

Ժողովի նախագահ՝ Անիչկա Առաքելյան  
քարտուղար՝ Սիլվա Սաճարյան

2011 թ. հոկտեմբերի 7-ին կայացավ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում են 112 բնակիչներ:

Ժողովի նախագահ՝ Անիչկա Առաքելյան  
քարտուղար՝ Սիլվա Սաճարյան

**Օ Ր Ա Վ Ա Ր Գ**

1. 2011 թ. երրորդ եռամսյակի հաշվետվություն

Լճեկ. համայնքի ղեկավար Կ. Էլլարյան/

Լսեցին. համայնքի ղեկավար Կ. Էլլարյանի զեկուցումը 2011 թ. երրորդ եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

Նշեց, որ 2011 թ. բյուջեի երրորդ եռամսյակի եկամտային մասով նախատեսված պլանային թվի համեմատ կատարվել է

	պլան	կատ.	%
հողի հարկ-	1960.0	2029,9	99.5
գույքահարկ -	479.0	329.6	68.8
հողի վարձավճար-1050		645.0	61.4
տեղական տուրք-90.0		80.0	88.8

Վերանորոգվել է «Տանձուտ» հանդամասի «Պապնի նով» հատվածը՝ 200 գծմ, որի աշխատանքների համար համայնքի ներդրումը կազմել է 297 000/երկու հարյուր իննսուներեք հազար/ դրամ:

Անց է կացվել ավագանու ընտրություն:

Առեստացիայի են ենթարկվել աշխատակազմի քարտուղարը, 3Ծ գլխավոր մասնագետ-գյուղատնտեսը, առաջին կարգի մասնագետը:

Ժամանակին և անկորուստ ավարտվել է բերքահավաքը: Հնձվել է 50 հա. ցորեն, միջին բերքատվությունը կազմել է 23 ց., կուտակվել է 1500 տ. խոտ, բարձր բերքատվություն է ապահովել եգիպտացորենի էլիտար սերմը:

Նշվել է «Գիտելիքների օրը», պատշաճ մակարդակով կազմակերպվել է Անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումը, ծախսվել է 400 000/չորս հարյուր հազար / դրամ:

Կատարվել է սանմաքրման աշխատանքներ, խրախուսվել են 12-րդ դասարանի աշակերտները:

Վորլդ- Վիժնի կողմից Դիլիջանի ճամբարում հանգստացող համայնքի 20 երեխաների ճանապարհածախսը հոգացել է գյուղապետարանը:

Դրամական օգնություն են ստացել համայնքի սոցիալապես անապահով 4 տնտեսություններ:

### Ժողովը որոշեց՝

1. Համայնքի ղեկավարի երրորդ եռամսյակում կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝

Ա. Առաքելյան

քարտուղար՝

Ս. Սահարյան

Սարիգյուղ համայնքի ղեկավար՝

Իսկականի հետ ճիշտ է՝

Աշխատակազմի քարտուղար՝

